ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«16» 03 2026թ.
№ Կառ 2/559

«Մեդիսար» ՍՊԸ-ին /ՀՎՀՀ 02555635/
ՀՀ, ք. Երևան, Գետառի 4/9
էլ. փոստի հասցե՝ sales@medisar.am, info@medisar.am
Հեռ.՝ +374 95 54 30 78

ՀՀ պաշտպանության նախարարության և «Մեդիսար» ՍՊԸ-ի միջև 23.05.2025թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-25-7/7-1 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում «Մեդիսար» ՍՊԸ-ն ի թիվս մատակարարվելիք այլ ապրանքների պետք է մատակարարեր նաև 3 հատ «Ջերմաչափեր /Ջերմաչափ ՏՆ-1-1/» ապրանքատեսակը, որը չի մատակարարել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «ա» և «բ» ենթակետերը՝ (համապատասխանաբար մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում և ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի) ՀՀ պաշտպանության նախարարությունը 13.03.2026թ.-ին միակողմանի մասնակի լուծում է վերոնշյալ պայմանագիրը:

Տեղեկացնում եմ, որ «Մեդիսար» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել **4 043** ՀՀ դրամ՝ որպես տույժ (Պայմանագրի 6.2 կետի համաձայն) և **525** ՀՀ դրամ՝ որպես տուգանք (Պայմանագրի 6.3 կետի համաձայն), և ևս **525** ՀՀ դրամ՝ որպես տուգանք (Պայմանագրի 6.3 կետի համաձայն), որը հաշվարկված է մինչև 15.10.2025թ. ներառյալ: Ինչպես նաև Պայմանագրի միակողմանի մասնակի լուծման արդյունքում պայմանագրի կատարման ապահովման գումարը կազմում է **10 500** ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին և որակավորման ապահովման գումարը կազմում է **15 750** ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000664 հաշվեհամարին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am

գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ եթե մինչև 2026թ. մարտի 23-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված **10 500** ՀՀ դրամ՝ պայմանագրի կատարման ապահովման և **15 750** ՀՀ դրամ՝ որակավորման ապահովման գումարները, ապա «Մեդիսար» ՍՊԸ-ն չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարները անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնների բնօրինակները մինչև 2026թ. մարտի 23-ը ներառյալ ներկայացնել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչություն, 2071 սենյակ:

Տեղեկացնում եմ նաև, որ պայմանագրի և որակավորման ապահովման գումարները, ինչպես նաև հաշվարկված տույժի ու տուգանքի գումարերը Ձեր կողմից չվճարելու դեպքում ՀՀ պաշտպանության նախարարությունը կձեռնարկի միջոցներ դրանց գանձելու ուղղությամբ:

Հարգանքով՝

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ